«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ

ՀՀ ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 43,
հեռ. (37410) 294 728, ֆաքս՝ (37410) 294 728
էլ. փոստ՝ Inbox@armrusgasprom.am

# Էական փաստեր և տեղեկություններ

ՀՀ կառավարության 01.10.2009թ. «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեում ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի N 1573-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և բյուջետային վարկ տրամադրելու մասին» N 1127-Ն որոշման համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարության և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ միջև 16.10.2009թ. կնքվել է 40,000,000 (քառասուն միլիոն) ԱՄՆ դոլար գումարով վարկային պայմանագիր :

Վերոնշյալ բյուջետային վարկը «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ին տրամադրվելու է մինչև 6 (վեց) ամիս մարման ժամկետով : Տրամադրված վարկի դիմաց «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ կողմից վճարման ենթակա տոկոսագումարը հաշվարկվում է փաստացի ստացված վարկի գումարի (դրա մի մասի) նկատմամբ տարեկան 11 (տասնմեկ) տոկոս դրույքաչափով: Որպես վարկի ապահովության միջոց՝ ՀՀ ֆինանսների նախարարության և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ միջև 16.10.2009թ. կնքվել է «Պահման պայմանագիր», որի համաձայն՝ վարկատուին են հանձնվելու ՀՀ ֆինանսների նախարարության անունով «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ կողմից թողարկվող 20,000,000,000 (քսան միլիարդ) դրամ ընդհանուր անվանական արժեքով օրդերային հասարակ մուրհակներ: